# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի առաջին մասի 6–րդ կետի բ ենթակետի պահանջները Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության որոշեց.

«Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-53 ծածկագրով կենցաղային ապրանքների ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշում է կայացրել 10.03.2025 թվականին վերջինիս տրամադրել /1/ մեկ աշխատանքային օր՝ հայտում արձանագրված անհամապատասխանությունների շտկում կատարելու համար, որը «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ի կողմից չի կատարվել: Ելնելով վերոգրյալից մասնակցի հայտը մերժվել է:

**Պատվիրատուի ղեկավար՝**

**Ա. Ֆիդանյան**

« 11 » « 03 » 2025թ.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Տրանզիտ Պրո» ՍՊԸ | 00146096 | ք. Երևան, Դավթաշեն 1թաղ. 15շ. 14բն, | Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի բ ենթակետի պահանջները ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-53 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «Տրանզիտ Պրո» ՍՊԸ-ի հայտը մերժել, քանի որ վերջինս կողմց ներկայացված 8-րդ (CPV-39831283/1 հատակի լվացման լաթ) չափաբաժնի համար ներկայացված, ֆիրմային անվանումը չի համապատասխանում հրավերով պահանջվող տեխնիկական պայմաններին: | | | ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2025/Ա-53 Պատվիրատուի ղեկավարի «11»«03»2025թ. որոշման համաձայն |